<u>ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/15 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի</u>

**Հավելված 1**

<u>Ընդհանուր պայմաններ՝</u>

1. Քրեակատարողական ծառայության խորհրդանշանը կիսաձվաձև է, բարձրությունը՝ 100 մմ, լայնությունը՝ 78 մմ, Վաճառողի կողմից կարվում է բոլոր կիսաբրդյա կիտելների, կիսաբրդյա բաճկոնների, դաշտային բաճկոնների, վերնաշապիկների, ձախ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև: Խորհրդանշանի վրա պատկերված են ոսկեգույն վահան, թուր, Հայաստանի Հանրապետության զինանշանը, դրոշը և կշեռք: Վահանի վերևում գրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», իսկ ներքևում՝ «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» (Նկար 1):

2. Քրեակատարողական ծառայության պետի և տեղակալների (5 ծառայողներ) բոլոր կիսաբրդյա կիտելների, կիսբրդյա բաճկոնների, դաշտային բաճկոնների, վերնաշապիկների, աջ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև, Վաճառողի կողմից կարվում է նաև 100 մմ բարձրությամբ և 78 մմ լայնությամբ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը (Նկար 2):

3. Գնորդի պահանջով հանդերձանքի ընդհանուր քանակի մինչև 10%-ի չափով Վաճառողը պարտավոր է կատարել անհատական չափսերի վերցնում և անհատական կար:

4. Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի պահանջով համաձայնեցման ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշները, նմուշները համաձայնեցնելուց հետո Վաճառողին կտրամադրվեն հանդերձանքի չափսերը, որից հետո կմատակարարվեն ապրանքները:

5. Բոլոր ապրանքները պետք է ունենան համապատասխան պիտակավորում և փաթեթավորում՝ համապատասխան ստվարաթղթե արկղերով: Փաթեթավորման պիտակների վրա պետք է նշված լինեն տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, ամիսը և տարեթիվը: Մատակարարումը և բեռնաթափումը իրականացվելու է աշխատանքային օրերին ժամը 09.30-ից մինչև 17.00-ն մատակարների միջոցներով և հաշվին:

6. Մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում արտոնագրված, հավաստագրված փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված եզրակացություն՝ Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի համապատասխանության վերաբերյալ, ընդ որում փորձաքննության ներկայացված հանդերձանքի քանակները վերականգնվում են մատակարար կազմակերպության կողմից: Գործվածքի բաղադրության և խտության շեղումը համաձայն ԳՕՍՏ-ի: Նշված 6-րդ կետը չի վերաբերվում թիվ 1,7,8,9 և 10 չափաբաժիններին:

Քրեակատարողական ծառայողների խորհրդանշանների, թևքանշանների, գլխարկանշանների, օձիքի վրա տեղադրվող տարբերանշանների նկարները՝

| Նկար 1. | Նկար 2. |
| --- | --- |
|  |  |

**Ստորև ներկայացվում է քրեակատարողական ծառայողի համազգեստի նկարները՝ համազգեստի արտաքին տեսքը:**

| Ամառային կարճաթև վերնաշապիկ և տաբատ | Կիսաբրդյա բաճկոն և ազատթող փողքերով տաբատ | Դաշտային կոստյում՝ կեպիով, կիսաբամբակյա, գունաքողարկված, անջրանցիկ կտորից | Երկարաթև վերնաշապիկ | Ձմեռային կիսաբրդյա վերարկու և ականջակալներով ձմեռային գլխարկ |
|---|---|---|---|---|
|  |  |  |  |  |